



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ  
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1  
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06  
Էլ. փոստ [gyumri@gyumri.am](mailto:gyumri@gyumri.am)

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**«17» հուլիսի 2015 թվական N 113-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ  
«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ  
ՇԻՆՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ  
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հովհաննես Թումանյանի անվան գրադարանի գործունեության համար բարվոք պայմաններ ապահովելու նպատակով շինվերանորոգման աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հատկացնել «Կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Գյումրու «Արտաշես Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքում տեղակայված Հովհաննես Թումանյանի անվան գրադարանի տարածքում շինվերանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսա- տնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Կողմ (14)**

**Դեմ (0)**

**Ձեռնպահ(0)**

- Ա.Ադամյան
- Գ. Ադամյան
- Ա. Բաղեյան
- Ա.Բաղդամյան
- Մ.Գաբրյան
- Ա.Գրիգորյան
- Վ.Եղիզարյան
- Հ.Խաչատրյան
- Հ.Կարապետյան
- Տ.Հովհաննիսյան
- Վ. Հունանյան
- Ն.Մեսրոպյան
- Ռ.Մխիթարյան
- Մ.Սահակյան

**ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝  
17 հուլիսի 2015թ.  
ք.Գյումրի**

**Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն  
Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ**